



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

05.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/10

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.06.2017թ. թիվ 03/73-1/10313-17 գրությամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.06.2017թ. թիվ ԴՎԱ/1663 գրության հիման վրա, 08.06.2017թ. թիվ 03/73-1/10313-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 05.06.2017թ. թիվ ԴՎԱ/1663 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ կարիքների համար կենցաղային տեխնիկայի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացվեց առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված Կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) գնային առաջարկ է ներկայացվել նաև Ընկերության կողմից: Ընկերությունը ճանաչվել է որոշ չափաբաժիններով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից, որից հետո պարզվել է, թե իբր Ընկերությունն ունի ժամկետանց հարկային պարտավորություններ: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նախաձեռնվել է սույն գործընթացը՝ Ընկերությանը գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցով:

Ընկերության կարծիքով, առկա չեն Ընկերության հայտը մերժելու և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը հետևյալ հիմնավորումներով.

Այսպես, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի տվյալների համաձայն՝ Ընկերության առնչությամբ արձանագրված է 12.695.502 ՀՀ դրամի չկատարված հարկային պարտավորություն, որի նկատմամբ նաև տույժ է հաշվարկվել: Չհերքելով այդ հանգամանքը՝ Ընկերությունը պնդում է, որ չունի իր կողմից չկատարված հարկային պարտավորություններ, քանի որ վկայակոչված պարտավորության հիմքում դրված է ՀՀ ֆինանսների նախարարության (ներկայումս՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ) խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության 21.07.2015թ. թիվ 6104700 ստուգման ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որի հետ համաձայն չլինելով՝ Ընկերությունը նախաձեռնել է դատական կարգով վիճարկման գործընթաց: Այսինքն՝ հարկային պարտավորության առաջադրման միակ հիմք հանդիսացող Ակտը դատական կարգով Ընկերության կողմից վիճարկվում է, որի արդյունքում դեռևս վերջնական դատական ակտ չի կայացվել: Ակտի բողոքարկման արդյունքում հարուցված թիվ ՎԴ/3580/05/15 վարչական գործով առկա է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 18.01.2017թ. որոշում, որի դեմ պատասխանող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 22.02.2017թ. ներկայացվել է վճռաբեկ բողոք, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից մինչ օրս որոշում չի կայացվել: Նման պայմաններում Ընկերությունը գտնում է, որ Ակտը դեռևս որևէ իրավական հետևանք չպետք է առաջացնի իր համար: Այդ եզրահանգման համար իրավական հիմք է հանդիսանում ՀՀ վարչական

դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմն այն մասին, որ վիճարկման հայցը վարույթ ընդունելով կասեցվում է վիճարկվող ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը (...):

Այսպիսով՝ Ընկերության կողմից Ակտի դատական կարգով վիճարկումը հանգեցրել է Ակտի կատարման կասեցմանը, ուստի մինչև այդ գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը չի կարող հաստատված համարվել Ակտում նշված հարկային պարտավորություն ունենալու փաստը, իսկ նման պնդմամբ չի կարող Ընկերության համար որևէ անբարենպաստ հետևանք առաջանալ:

Նշվածից հետևում է, որ այս պահի դրությամբ բացակայում է «խախտման» հիմնավորումը, ուստի և առկա չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու փաստական հիմքերը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված անձ Սարգիս Մադաթյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2017թ. թիվ 03/73-1/10313-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 05.06.2017թ. թիվ ԴՎԱ/1663 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի Ընթացակարգին ներկայացված հայտը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.04.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 և 10.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե) 26.04.2017թ.

կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 10.05.2017թ. ներկայացված եզրակացությունը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կենցաղային տեխնիկայի գնման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, և 9-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Հանձնաժողովի 02.05.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 5 արձանագրության Հավելված 1-ի համաձայն՝ ընթացակարգի 2-րդ չափաբաժնով «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 4.3 կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին և հաջորդ տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 10.05.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 04.04.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 25,723,881 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

10.05.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով Հանձնաժողովն արձանագրել է «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի հայտը

ներկայացնելու օրվա ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն ունենալու փաստը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

- 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

- 1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

- 2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

• 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 04.04.2017թ., դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

• 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով(...):

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/37» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի շրջանակում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի նախատեսված խախտում՝ ներկայացնելով կեղծ տվյալ, ինչից հետո 18.04.2017թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՔԿՎ(17)-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին, ինչն արձանագրվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2017թ. թիվ 03/27-1/10921-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով, Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.06.2017թ. թիվ 03/73-1/10313-17 գրությամբ «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ